**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ԳՀԱՊՁԲ-22-3/3-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան // .04.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԿԱՐԻԶԱ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Աբրամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2022թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-22-3/3-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի №1Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 19 607 000 (տասնինը միլիոն վեց հարյուր յոթ հազար) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. . Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| | |
|---|---|
| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԿԱՐԻԶԱ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ.ք. Երևան, Աբովյան փող., 34Ա շ., 37 բն., |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 16600394833700 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 04418508 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ա. ԱԲՐԱՄՅԱՆ |

«ԿԱՐԻԶԱ» «КАРИЗА» «CAREEZA» 04418508

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-4 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Ապրանքի մատակարարումը 2022թ., Ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 1(2) | Ձայնային սարքավորումներ (Ձայնային սարքավորում) | հատ | 20 | 625 000 | 12 500 000 | 20 |
| 2(6) | Հոգեբանական հետազոտությունների բազմոց (Մարմնի մերսման էլեկտրական սարք (բազկաթոռի համար նախատեսված)) | հատ | 23 | 210 000 | 4 830 000 | 23 |
| 3(8) | Կախիչներ (Հեռուստացույցի համար նախատեսված շարժական ձող՝ շարժական տակդիրով) | հատ | 23 | 99 000 | 2 277 000 | 23 |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-4 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ., ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ. | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1(2) | Ձայնային սարքավորումներ (Ձայնային սարքավորում) | 32341160/502 | 12 500 000 | 12 500 000 | 12 500 000 |
| 2(6) | Հոգեբանական հետազոտությունների բազմոց (Մարմնի մերսման էլեկտրական սարք (բազկաթոռի համար նախատեսված)) | 33191170/501 | 4 830 000 | 4 830 000 | 4 830 000 |
| 3(8) | Կախիչներ (Հեռուստացույցի համար նախատեսված շարժական ձող՝ շարժական տակդիրով) | 39132220/505 | 2 277 000 | 2 277 000 | 2 277 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԿԱՐԻՉԱ» ՍՊԸ
Տնօրեն

Ա. ԱԲՐԱՄՅԱՆ